Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի
2020 թվականի օգոստոսի 31-ի թիվ 5- Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՆԱԽԱԲԱՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) արմատական կրթական բարեփոխումների համատեքստում կարևորում է այնպիսի փասթաթղթի առկայությունը, որով հնարավոր կլինի համակարգել բարեփոխումների և զարգացման ռազմավարական ծրագրերի մշակումը, դրանց ազդեցությունների գնահատումը կրթության և շրջանավարտի որակի ապահովման վրա, ճիշտ ժամանակին, անհրաժեշտության դեպքում, դրանց վերանայումը, ինչպես նաև նոր ռազմավարական ծրագրերի մշակման համար նախորդ ծրագրերի վերլուծության արդյունքների ապահովումը:

Այս նպատակներից ելնելով և կարևորելով ռազմավարական ծրագրերում շահակիցների մեծ ընդգրկվածության ապահովումը, նախորդ ծրագրերի համակարգային վերլուծություն իրականացնելու ձգտումը, Ինստիտուտի Գիտական խորհուրդը որոշում է ունենալ ռազմավարական ծրագրի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման քաղաքականություն և ընթացակարգ:

Սույն քաղաքականության և ընթացակարգի անբաժանելի մաս են համարվում փոփոխությունները, լրացումները և Հավելվածները:

Նպատակը

Ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) մշակման, իրականացման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման միջոցով.

1. իրավիճակի արդյունավետ վերլուծության իրականացումը,
2. բարելավմանն ուղղված համապատասխան գործողությունների ու միջոցառումների պլանի մշակումն ու իրականացումը,
3. ապագայի համար իրատեսական և իրագործելի ռազմավարական ծրագրի մշակումը:

4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ

Ինստիտուտում ՌԾ-ները, որպես կանոն մշակվում են 3-5 տարվա կտրվածքով, սակայն կարող են մշակվել ավելի երկար՝ մինչև 10 տարի ժամկետով հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրեր[1]:

ՌԾ-ի մշակմանը նախորդում է դրա պլանավորումը:

Պլանավորման փուլի ժամանակ՝

1. հստակեցվում է Ինստիտուտի ընթացիկ վիճակը, առկա ռեսուրսները և Ինստիտուտի ձգտումները առաջիկա 3-5 տարիների համար,
2. որոշվում է ռեսուրսների օգտագործման առաջնահերթությունները,
3. վերլուծվում է ներքին և արտաքին միջավայրերը,
4. կարևորվում է ինչպե՞ս կարելի է դիմագրավել մարտահրավերներին և պատրաստ լինել իրականացվող փոփոխություններին,
5. սահմանվում է ռազմավարական հստակ ուղղություն/հիմնական նպատակ,
6. սահմանվում է ապագայի կոնկրետ նպատակները/ուղղությունները:

Մշակման փուլի քայլերը՝

1. հստակեցնել ՌԾ մշակման գործընթացում ընգրկվող անձնաց և, թե յուրաքանչյուրը ո՞ր պահից կարող է միանալ մշակման աշխատանքներին,
2. վերլուծել Ինստիտուտի ընթացիկ վիճակը և հնարավորությունները,
3. քննարկել Ինստիտուտի ձգտումները,
4. սահմանել, թե ինչպես Ինստիտուտը կկարողանա հասնել իր նպատակներին (ձգտումներին),
5. սկսել նոր ՌԾ կազմելու գործընթացը:

Ռազմավարական ծրագրի մշակումը կախված իրավիճակից և հնարավորություններից կարող է տևել 2-3 ամիս:

Մինչ մշակման բուն փուլին անցնելը Ինստիտուտի ռեկտորի հրամանով ձևավորվում է ՌԾ-ի մշակման աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկվում են Ինստիտուտի ներքին և արտաքին շահակիցները (վարչական, պրոֆեսորադասախոսական կազմ, ուսանողներ, գործատուներ):

Քայլ 1. ՌԾ մշակման գործընթացում ընգրկվող անձանց հստակեցում, յուրաքանչյուրին՝ ըստ հարմար պահի, ներգրավում մշակման գործընթացին:

Ինստիտուտի ռեկտորը սույն քաղաքականության և ընթացակարգի տրամաբանությունից և պահանջներից ելնելով՝ ըստ համապատասխանության, ՌԾ մշակման աշխատանքներում ընդգրկում է՝

1. նրանց, ովքեր պատասխանատու կլինեն ըստ ուղղությունների իրականացնել ՌԾ-ն (պրոռեկտորներ, դեկաններ, մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատու բաժին, որակի ներքին ապահովման պատասխանատու բաժին, հանրային կապերի պատասխանատու կամ բաժին).
2. նրանց, որոնց միջոցով չափելի է դառնում ՌԾ-ի արդյունավետությունը (պրոֆեսորադասախոսական կազմ, ուսանողներ).
3. նրանց, ովքեր նպաստում են ՌԾ-ի մշակմանը (գործատուներ, վարչական և (կամ) ուումնաօժանդակ ստորաբաժանումներ):

---

[1] Սույն քաղաքականությունը և ընթացակարգը նկարագրում է 3-5 տարվա ռազմավարական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայմանը գործընթացը:

Քայլ 2. Ինստիտուտի ընթացիկ վիճակի և հնարավորությունների վերլուծություն

Անձինք, ովքեր ներգրավված են ՌԾ-ի մշակման աշխատանքներում (մշտադիտարկում, պլանավորում, մշակում) ապագայի պլանավորման համար իրականացնում են իրավիճակի ընդհանուր վերլուծություն.

1. արտաքին և ներքին միջավայրի ուսումնասիրմամբ,
2. Ինստիտուտի տեսլականի, առաքելության և արժեքների վերանայմամբ կամ զարգացմամբ:

Արտաքին և ներքին միջավայրի վերլուծություն (SWOT)

Որպես կանոն ՌԾ-ն ենթադրում է հստակ ուղղություն/նպատակ, սակայն միաժամանակ փոփոխություններին արձագանքելու ճկունություն:

Այդպիսի փասթաթուղթ կազմելու համար անհրաժեշտ է տեղեկություններ ներքին միջավայրի գործընթացների, արտաքին մարտահրավերների, վտանգների, հնարավորությունների և ապագա միտումների մասին:

SWOT[2] վերլուծության սխեմատիկ կառուցվածքը՝

Ուժեղ կողմեր (ներքին միջավայր)	**Թույլ կողմեր (ներքին միջավայր)**
Հնարավորություններ (արտաքին միջավայր)	**Սպառնալիքներ (արտաքին միջավայր)**

SWOT վերլուծությունն իրականացվում է Հավելված 1.1-ում ներկայացված SWOT հարցաշարի միջոցով (նայել՝ Հավելված 1.1):

Ինստիտուտի տեսլականի, առաքելության և արժեքների վերանայում կամ զարգացում

SWOT վերլուծությամբ վեր կհանվեն Ինստիտուտի կարիքների, առաջնահերթությունների, խնդիրների և հնարավորությունների տեղեկությունները:

[2] SWOT վերլուծությունը արվում է ներկա ժամանակում՝ հավաքելով ներկա իրավիճակին հանգած ներքին միջավայրին վերաբերող արված կամ չարված գործողություններին վերաբերելի տեղեկությունները, արտաքին միջավայրի հրանարվորությունները և մարտահրավերները՝ հաշվի առնելով Ինստիտուտի դիրքը արտաքին միջավայրում:

Այնուհետև վեր հանված կարիքների հիման վրա Ինստիտուտը կվերանայի կամ կզարգացնի գործող տեսլականը, առաքելությունը և արժեքները, դրանց զարգացումը տեսնելով նոր 3-5 տարվա ՌԾ-ի նպատակների և դրանց հասնելու ուղղությունների իրագործմամբ:

Քայլ 3. Ինստիտուտի ձգտումների քննարկում

SWOT վերլուծության միջոցով ուսումնասիրվում է Ինստիտուտի ներկա իրավիճակը, մարտահրավերներն ու փոփոխությունները՝ նպատակ ունենալով հստակեցնելու Ինստիտուտի ապագան:

Այս նպատակին հասնելու համար հարկավոր է ճշտել.

1) Ինստիտուտի առաջնահերթությունները առաջիկա 3-5 տարում (օրինակ՝ կրթության և շրջանավարտի որակ, գործատուի բավարարվածություն և այլն),
2) Ինստիտուտի ռազմավարական (երկարաժամկետ նպատակներ) նպատակներ (որոնք պետք է օգնեն հասնելու ՌԾ առաքելությանը, լինեն հնարավորինս իրատեսական քանակի՝ օրինակ 3 կամ 5, ունենան հստակ ուղղվածություն, լինեն չափելի):
3) ինչպե՞ս դրանք կօգնեն հասնել Ինստիտուտի ՌԾ-ի առաքելությանը:

Քայլ 3. Ինստիտուտի նպատակներին հասնելու կարողության սահմանում
ՌԾ նպատակներին հասնելու լավագույն միջոցներից է ճանապարհային քարտեզի կազմումը, որով սահմանվում են.

1. ՌԾ նպատակներին հասնելու հստակ, չափելի, հնարավոր և իրատեսական քայլերը կամ ուղղությունները,
2. ՌԾ նպատակներին հասնելու համար Ինստիտուտի կողմից տրվող ռեսուրսները (մարդկային, նյութական, ֆինանսական),
3. Տարեկան գործողությունների կամ աշխատանքային պլանները, որոնք ուրվագծում են աշխատանքի ամսական ծրագրերը:

Տարեկան գործողությունների կամ աշխատանքային պլանները հաստատվում են տարեկան կտրվածքով և ունեն հետևյալ կառուցվածքը՝

Գործողություն	Ֆակուլտետ/ամբիոն/բաժին	Պատասխանատու (հիմնական և օժանդակ)	Իրականացման եղանակ (խմբային, անհատական, ֆոկուս խմբային, հարցումներ և այլն)	Նյութական ռեսուրս	Մարդ (կամավորներ, պրակտիկատներ և այլն, աշխատողներ)	Ֆինանսներ	Գնահատման ցուցիչ	Ազդեցություն

ՌԾ-ի իրագործման համար համապատասխան համակարգերի և կառուցակարգերի առկայության ապահովում

Ինստիտուտը կանոնադրական և ռազմավարական նպատակներն իրականացնելու համար սահմանում է իր կառուցվածքը, կազմակերպաիրավական ձևը, կառուցվածքային ստորաբաժանումների դերը և գործառույթները, կրթական, հետազոտական և գիտական, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքականությունները, ընթացակարգերը, կանոնակարգերը և կառավարման օղակները: Սրանց առկայությունը կարևոր է պատասխանելու հետևյալ 3 հարցին՝

1. Ո՞վ է հաշվետու
2. Ո՞ւմ է հաշվետու
3. Ի՞նչի համար է հաշվետու:

ՌԾ նպատակները կախված արտաքին և ներքին միջավայրի հիմնավորված և էական փոփոխություններից, կարող են փոփոխվել (փոփոխությունները կվերաբերեն ինչպես անձնակազմին, ֆինանսներին, ենթակառուցվածքներին, այնպես էլ կրթական գործընթացներին):

Քայլ 4. Նոր ՌԾ-ի կազմում

Ինստիտուտի զարգացման, առաջընթացի, ինչպես նաև կանոնադրական նպատակների իրագործման համար Ինստիտուտը մշակում է գրավոր ռազմավարական ծրագիր 3-5 տարվա համար: ՌԾ-ով ուրվագծվում է Ինստիտուտի նպատակներին հասնելու կարողությունը:

Այն պետք է ցույց տա, որ գոյություն ունի կազմակերպության արդյունավետ վերահսկողություն և կառավարում՝ ներառելով կառավարման մարմինները՝ վերահսկողության օղակներով և հաշվետվողականությամբ:

Ինստիտուտի ՌԾ-ն ունի հետևյալ կառուցվածքը.

1. ՌԾ-ի բովանդակությունը.
2. *Նախաբանում նկարագրվում են՝* նախապատմություն այն մասին, թե ինչ զարգացման փուլում է գտնվում Ինստիտուտը, ինչպես նաև նոր ՌԾ մշակելու ձգտումները և բարեփոխումների համառոտ նկարագիրը:
3. *Ներածություն՝* ներկայացնում է նոր ՌԾ-ի ամփոփագիրը:
4. *Նախորդ ՌԾ-ի SWOT վերլուծությունը՝* ներառելով դրա արդյունավետության գնահատականները, չիրականացման կամ ոչ արդյունավետ իրականացման օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները կամ խնդիրները, Ինստիտուտի ուժեղ և թույլ կողմերը, ապագայի մարտահրավերները:
5. *Տեսլականը՝* Ինստիտուտի ձգտման վերջնակետի սահմանումը 3-5 տարվա համար:
6. Առաքելությունը
7. *Նպատակը (ները)՝* Ինստիտուտի կանոնադրական նպատակների իրականացման համար սահմանվում են 3-5 տարվա ՌԾ նպատակները և գերակայությունները՝ իրենց հստակ ցուցիչներով և վերջնարդյունքներով, որոնցից հնարավոր կլինի մշակել տարեկան նպատակներ, որից հետո կմշակվեն տարեկան գործողությունների պլանները:
8. *ՌԾ-ի իրագործման պլան-ժամանակացույցը 3-5 տարվա համար:*
9. *ՌԾ-ի պլան-ժամանակացույցի տարեկան աշխատանքային ընդհանրական պլանները:*

5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՓՈՒԼ

Ինստիտուտը ՌԾ առաջընթացը, նպատակներին հասնելու գործընթացներն ուսումնասիրելու համար իրականացնում է հերթական և արտահերթ մշտադիտարկումներ:

Հերթական մշտադիտարկումն անցկացվում է 2 տարին մեկ անգամ:

Արտահերթ մշտադիտարկումն իրականացվում է այն նպատակով, եթե տեղի է ունեցել արտաքին կամ ներքին միջավայրի այնպիսի փոփոխություններ, որոնց առկայության դեպքում կասկածի տակ է դրվում է ՌԾ-ի բնականոն շարունակության ապահովումը:

Հերթական կամ արտահերթ մշտադիտարկումներ իրականացնելու համար Ինստիտուտի ռեկտորի հրամանով կազմվում է մշտադիտարկող խումբ հերթական մշտադիտարկում իրականացնելուց առնվազն 1 շաբաթ առաջ, որի կազմում չեն կարող ընդգրկվել ՌԾ-ի մշակման աշխատանքներ իրականացնող խմբի անդամները:

Մշտադիտարկման նպատակն է՝ ստուգել ՌԾ-ի իրագործման առաջընթացը:

ՌԾ առաջընթացն ապահովելու և նպատակներին հասնելու համար Ինստիտուտը պետք է.

1. ապահովի, որ ստորաբաժանումների և պատասխանատու անձնաց գործողությունները լինեն ՌԾ տեսլականին, առաքելությանը, նպատակներին և ուղղություններին համահունչ.
2. անհրաժեշտության դեպքում վերանայի գործող ՌԾ-ն ներքին և արտաքին էական փոփոխություններին համապատասխան:

Մշտադիտարկման միջոցով Ինստիտուտի կառավարման մարմինները ցանկանում են պարզել, արդյո՞ք.

1. ՌԾ-ի իրականացումը հանգեցնու՞մ է իր սահմանած նպատակներին և ուղղություններին,
2. կա՞ առաջընթաց և նկատելի՞ են տեսլականին, առաքելությանը հասնելու միտումները,
3. բավարարվու՞մ են շահակիցների կարիքները,
4. նկատելի՞ է ՌԾ-ի ազդեցությունը Ինստիտուտի զարգացման գործում,
5. ՌԾ-ի իրագործման պատասխանատուների գործողություններն ընթանու՞մ են ՀՀ օրենսդրության պահպանմամբ,
6. կա՞ անհրաժեշտություն ՌԾ-ն վերանայելու:

Մշտադիտարկման համար տվյալների հավաքագրման աղբյուրներ են համարվում.

1) Ինստիտուտի վիճակագրական տվյալները.
2) ՈԱԿ ներքին մշտադիտարկման հաշվետվությունները.
3) Ինստիտուտի ստորաբաժանումների և ղեկավար մարմինների հաշվետվությունները.
4) Տարեկան գործունեության և ֆինանսական հաշվետվությունները.
5) Ինստիտուտի մշակած փաստաթղթերը.
6) Մշտադիտարկման խմբի կողմից շահակիցների տարբեր խմբերի հետ անցկացվող ֆոկուս խմբերի կամ հարցումների արդյունքները, դիտարկումները.
7) Ինստիտուտի ռեսուրսային բազայի ուսումնասիրության վերաբերյալ հավաքագրված տվյալները:

ՌԾ-ի առաջընթացը, ազդեցության չափումը Ինստիտուտի գործունեության վրա և շահակիցների շրջանում իրականացվում է գնահատման միջոցով:

Մշտադիտարկումը և գնահատումը հնարավորություն են տալիս անհրաժեշտության դեպքում փոփոխել կամ վերանայել գործող ՌԾ-ն արտաքին և ներքին միջավայրի էական փոփոխություններին ժամանակին արձագանքելու նպատակով:

Գնահատման համար շատ կարևոր է չափելիությունը, ինչն էլ ստիպում է ՌԾ-ն մշակելիս ուշադրություն դարձնել, որպեսզի սահմանվեն հստակ, իրագործելի և չափելի նպատակներ, նպատակներին և ուղղություններին հասնելու համար սահմանել գործողությունների իրականացման կոնկրետ ցուցիչներ: Մշտադիտարկման անցկացման և գնահատման ձևաչափերը նայել Հավելված 1.2-ում:

Մշտադիտարկման արդյունքում պատրաստվում է ***զեկույց*** մշտադիտարկման ավարտից 2 շաբաթվա ընթացքում: Զեկույցի ձևաչափը նայել Հավելված 1.3-ում:

Զեկույցը ներկայացվում է Ինստիտուտի ռեկտորին, ով տարեկան հաշվետվությունը հոգաբարձուների խորհրդի նիստին ներկայացնելուց, ներկայացնում է նաև մշտադիտարկման զեկույցն ի գիտություն, եթե այն արտահերթ մշտադիտարկման զեկույց չէ, որը ենթակա է ներկայացման հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստով:

ՌԾ-ի մշտադիտարկման իրականացման ժամանակ հիմնական տրվող հարցերն են.

1. Արդյո՞ք ՌԾ նպատակներն ու խնդիրները իրականացվում են, թե ոչ: Եթե ոչ, ապա տրվում են հետևյալ ենթահարցերը.
   1) Արդյո՞ք նպատակները ձեռք կբերվեն ՌԾ-ում նշված ժամկետներում: Եթե ոչ, ապա ի՞նչու:
   2) Արդյո՞ք նպատակների և խնդիրների սահմանմված ժամկետները պետք է փոխվեն:
   3) Արդյո՞ք անձնակազմն ունի համապատասխան ռեսուրսներ (գումար, սարքավորումներ, հնարավորություններ, կարողություններ) նպատակներին հասնելու համար:
   4) Արդյո՞ք նպատակներն ու խնդիրները դեռ իրատեսական են:
   5) Արդյո՞ք նպատակները պետք է փոխվեն:
2. Արդյո՞ք ՌԾ նպատակներն ու խնդիրները իրականացվում են, թե ոչ: Եթե այո, ապա ինչ ազդեցություն ունի ՌԾ-ն Ինստիտուտի առաջընթացում:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ

_____ _____ 2020Թ.

ԵՐԵՎԱՆ

Հավելված 1.1

ՌԾ-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Ինստիտուտի ներքին և արտաքին միջավայրի ռազմավարական վերլուծությունը հնարավորություն կտա պլանավորել առավել արդյունավետ ՌԾ ապագայի համար, ինչպես նաև վեր հանել գործող ՌԾ-ի խնդիրները:

1. ***Որո՞նք են Ինստիտուտի ուժեղ և թույլ կողմերը:***

1) Որո՞նք են վերջին երեք կամ հինգ տարվա ընթացքում հիմնական ձեռքբերումները և նվաճումները:
2) Ի՞նչ չափով են ուժեղ կողմերը թույլ տալիս օգտվել հնարավորություններից և դիմակայել վտանգներին:
3) Որքա՞ն է Ինստիտուտը հաջողել ռազմավարական նպատակներին հասնելու գործում:
4) Ինստիտուտը հասե՞լ կամ գերազանցե՞լ է ՌԾ նպատակները:
5) Բավարարվա՞ծ են շահակիցների պահանջները:
6) Որքանո՞վ են ուժեղ կողմերն արտացում Ինստիտուտի դիրքը շուկայի մրցակիցների նկատմամբ:
7) Արդյո՞ք ֆինանսապես կայուն է Ինստիտուտը:
8) Արդյո՞ք բավարար են անձնակազմի կարողությունները և փորձը ՌԾ նպատակներին հասնելու համար:
9) Որքա՞ն կգնահատեք Ինստիտուտի հեղինակությունն արտաքին միջավայրում: Արդյո՞ք Ինստիտուտն ունի ազդեցություն այն ոլորտներում, որոնց հետ փոխհարաբերվում է: Մրցակիցների կողմից առավելությունների արձանագրման դեպքում հակազդման ի՞նչ միջոցներ և գործողություններ են մշակվում: Ի՞նչ դրական փոփոխություններ ունի Ինստիտուտն աջակիցների կամ ֆինանսավորողների շրջանում:
10) Որքանո՞վ են արդյունավետ Ինստիտուտի կառավարման համակարգերն ու գործընթացները: Արդյո՞ք Ինստիտուտի կազմակերպական կառուցվածքն արտահայտում է Ինստիտուտի գործունեությունը և արդյունավետ է, թե՞ բյուրոկրատական:

2. ***Որո՞նք են Ինստիտուտի հնարավորություններն ու սպառնալիքները:***

1) Պետական կրթական, գիտական և հետազոտական քաղաքականությունը.
2) Միտումները կրթության, գիտության և հետազոտության ոլորտում.
3) Երկրի մասշտաբով կրթություն կազմակերպող կազմակերպությունների ծառայությունների ուսումնասիրություն.
4) Ժողովրդագրություն (տարիք, սեռ, սոցիալական կարգավիճակ, հետաքրքրություններ).
5) Մրցակցային դաշտ երկրում և հնարավորության դեպքում երկրից դուրս.
6) Ինստիտուտի գործունեությանը խոչընդոտող արտաքին գործոններ.
7) Մասնագիտական շուկայի և շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրություն.
8) Ինստիտուտի զարգացման հնարավորությունները Հայաստանում և արտասահմանում.
9) Ֆինանսավորման հնարավորությունները և դրանց ներգրավման աղբյուրները:

Հավելված 1.2.

1. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Ինստիտուտի ՌԾ նպատակը		Նպատակին հասնելու խնդիրները	Նախատեսվող վերջնարդյունքները	Ցուցիչները	Գնահատման մեխանիզմները կամ գործիքները /ինչպե՞ս կարելի է ստուգել Ինստիտուտը լուծել է իր առջև դրված ՌԾ նպատակները և խնդիրները, թե ոչ/
1					
2					
3					
4					

2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Նպատակը	Խնդիրը	Իրականացման ժամկետները	Առկա վիճակը	Պլանավորվածի համեմատություն
1.				
2.				

Հավելված 1.3

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

(ձևաչափ)

Մշտադիտարկան գործընթացի ընդհանուր նկարագիրը

Մշտադիտարկման ժամանակացույցը, այցի հանդիպումների ժամանակացույցը (որպես հավելված), ուսումնասիրված փաստաթղթերը և ռեսուրսները (որպես հավելված), մշտադիտարկումն անցկացրած աշխատակիցները (որպես հավելված):

Մշտադիտարկման նպատակը, դուրս բերված խնդիրները և եզրակացություն

Սահմանել մշտադիտարկման անցկացման նպատակը: Ըստ ՌԾ նպատակների և ուղղությունների նկարագրել առկա իրավիճակը Ինստիտուտում, ՌԾ-ի ազդեցությունը Ինստիտուտի առաջընթացի վրա: ՌԾ-ի կապը Ինստիտուտի ներկա վիճակի հետ: ՌԾ չկատարման կամ թերի կատարման օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրները, խոչընդոտները և պատճառները: *Եզրակացություն այն մասին թե որքանով է համահունչ Ինստիտուտի գործունեությունը ՌԾ-ին:*